

Էդ. Աղայան

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

1. ՀԱՅԵԼ, ՆԱՅԵԼ

Հայել բառի արմատն առանձին չի գործածվել, բայց պահպանված է բազմաթիվ բարդ ու ածանցավոր բառերի մեջ, ինչպես՝ հայելի, ռայեացք, հայսրան ժաշք, երկնահայեաց, դմնահայեաց, լաւահայեաց, յառաջահայեաց, ընդվայրահայեաց և այլն, որոնք բոլորն էլ գործածված են հայ հին մատենագրության մեջ. աշխարհարարում, նորակազմ բարդությունների ու ածանցավոր բառերի մեջ հանդես է գալիս հայաց, հայեց (<հայեաց) ձևերով, ինչպես՝ հայեցում, հայեցակետ, բարձրահայաց, գեղահայաց և այլն: Հ. Աճառյանը հայել բառի արմատն է համարում հայ—, սակայն ավելի ճիշտ է հա—, որի վրա ավելացել է յ—ն, համաձայն այն կանոնի, ըստ որի հայերենում ա-ի և հաջորդող ձայնավորի միջև մտնում է յ: Ծագում է հնդեվրոպական *ha— նախաձևից, որ ցեղակից լեզուների մեջ պահպանվել է երկու հիմնական իմաստով՝ «պահել, պահպանել» և «հսկել, նայել, դիտել»: Այսպես՝ 1. լատիններեն nasco, ēre «արածեցնել», pastor «հովիվ», սանսկրիտ՝ pati «պահել, պահպանել», paśu-pa «նախարարան» և այլն. 2. սլավ. pasty očy ma «հաստատուն նայել, ակնկառույց լինել», ռուս. опасаться, запасать և այլն: Առաջին իմաստով հայերենում ունենք հօր-ան ժայթի, ուլի, ինչպես ե՝ ոչխարի հոտ, որ ծագում է նույն արմատի *pa- ածանցավոր ձևից. նույն արմատի բարդությամբ ունենք և հովիւ <vi-pa «ոչխար պահող» բնիմաստով: Երկրորդ իմաստի հետ կապվում է հայել բառը, որ գրաբարում նշանակում էր. «նայել, դիտել, ակնկառույց լինել, սպասել, ակնկալել», որոնք բոլորն էլ, իհարկե, նայել հիմնական իմաստի փոխարինությունները կամ առումներն են:

Նույն արմատից է ծագում նաև նայել բառը, որ կազմված է, ըստ այդմ, հայել բառից՝ նի- մասնիկով. նի-հայել > նհայել > նայել, և սկզբնապես նշանակել է «գեպի ցած նայել», ինչպես որ հայել նշանակել է «գեպի վեր նայել». Հայկազեան բառարանը հայել բառի առումներից մեկն է համարում «վերակնել, ամբառնալ զայս, վեր նայել»: Հայել և նայել բառերի իմաստային այս տարբերությունը գիտակցել է նաև Տաթևացին, որ «Գիրք հարցմանց», էջ 407-ում բացատրում է՝ հայել «ցածրից վերև նայել», նայել՝ «վերևից ներքև նայել»:

2. ՀԻԱՆԱԼ

Արմատն է հի—, որ բացի հիանալ և դրանից կազմված բառերից (հիացում, հիացմունք և այլն), պահպանված է նաև հիսաքանչ, հիազսրհուր, հիազօր, հիահրաշ, հիանշմար, հիաչքնաղ, հիապատում, հիաքալիվել և այլ բառերում: Հիանալ բառի բուն նշանակությունն է «զարմանքից

ապշած ֆնալ», «սքանչանալ»: Արմատը, սակայն, ունի ընդհանրապես հոգեկան բարձր զգացման, հուզմունքի իմաստ: Ծագում է հնդեվրոպական *pī-*արմատից, որի ժառանգներն են. գոթերեն *infeinan* «հուզվել, խզահարվել», լատիներեն *pius* «երկյուղած, աստվածավախ, սիրալիր՝ ծնողների, հայրենիքի, հարազատների նկատմամբ», անգլոսաքսոներեն *foele* «հավատարիմ», միջին գերմաներեն *velich, veilich* «ապահով, անհոգ, ուրախ»:

3. ԲԱՅ, ԲԱՅՈՅ

Այս բառը նշանակում է գազանների որջ կամ գազանների ձմեռվա քառասունքը. գործածված է հայ հին մատենագրության մեջ. օրինակ՝ «Առիւծ գոչեաց ի յանտառին և գիշախանձ արջն ի բային»: Ավելի գործածված է բայոց ածանցյալ ձևով, ինչպես և՛ բայել, բայանալ բայաձևերով. ինչպես՝ «Ազգք ազգք առնիտաց ի ձմեռանի բայեցեալ անշարժ կայ». Գոչ. «Բայանան օձք ընդ հողով. և որջք իւրեանց են ի սորս և ի սոյզս երկրի» Փիլ. լիմ., «Ազգմունք բնականք, և արջոյ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ» Եղն., և այլն: Գրված կա նաև բահ, որ սակայն հետին է: Ծագում է հնդեվրոպական **bheu-* արմատի **bnut-* ձևից՝ *a* ձայնդարձով (**bhat*). ընդհանուր «բնակարան, տուն» իմաստով նույն արմատից կան բազմաթիվ բառեր ցեղակից լեզուներում. ինչպես՝ հին իսլանդերեն *buet* «բնակարան», չեխերեն *bydlo* «կաղարան, բնակարան», հին պարսկերեն *both* «խրճիթ», լիտվաներեն *butas* «տուն» և այլն: Հայերենի «որջ» իմաստով նույն արմատից ունենք՝ հունարեն *φωλεός, φωλειός* «վայրի կենդանիների որջ», լիտվաներեն *buklas* «կենդանիների որջ», հին իսլանդերեն *bōi* «կենդանիների և մարդկանց ապրելու տեղ», որոնք բոլորն էլ նախուպես նշանակել են «ապրելու տեղ», ընդհանրապես, իսկ հետագայում՝ «կենդանիների ապրելու տեղ, որջ»: Այսպիսով, հայերեն բայ-ի կապը **bhut-*, **bhat-* արմատի հետ հաստատվում է: Ձայնդարձի համար կարելի է համեմատել գոթերեն *bauan* «բնակվել», գերմաներեն *bauen* «կառուցել» և այլն:

4. ԱՐՏՈՐԱԼ

Այս բառը գործածված է միջնադարում («Լատաակոց դիրք», Վարդանի «Առակք» և այլն), գործածվում է Պոլսի, Խարբերդի, Նոր-Նախիջևանի և մի քանի ուրիշ բարրաոներում և նշանակում է շտապել, աճապարել: Գոյականի ձևերն են արտորք, արտորանք: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» (հտ. 1, էջ 766) արմատական ձևն է համարում սրտոր-ք. բայց պարզ արմատն է արտ-, որ ածանցված է -որ մասնիկով, ինչպես ունենք՝ գլորել, մտորել և այլն: Ծագում է հնդեվրոպական **dra-* արմատից, որ նշանակում է «վազել, շտապել»: հմմտ. հին հնդկերեն *drati* «վազում է, շտապում է», հունարեն *δραπέτεω* «վազում եմ (վրայով)», հին բարձր գերմաներեն *zittarōm* «շտապում եմ», գոթերեն *anatrimpan* «շրջել, շարժվել», միջին բարձր գերմաներեն *trumpfen* «վազել», անգլերեն *tramp, trample* «մտնել», և այլն: Հայերենը ծագում է *dra-* ձևից, *dr* > *pr* օրինաչափ տեղափոխությամբ (հմմտ. **drakru* > արտասու, *dhabhro* > դարբին և այլն) և բառասկզբում *p-*ից առաջ *w-*ի հավելումով, որից և ստացվել է արա- պարզական արմատը:

5. ՏԱՂ, ՏՈՂ

Տաղ բառը ավանդված է հետմետրոպյան շրջանի մատենագրությամբ (Փիլոն, Պղատոնի տրամախոսութիւնք, Թրակացու Արուեստ քերականին» և այլն) և նշանակում է «երգ, քերթված, ոտանավոր»։ սակայն նախապես նշանակել է նաև «խոսք, բան», որ պահպանված է սուստաղ ստախոս» բառի մեջ (գործածել է Լամբրոնացին «Գովեստ ներրողական յազգա վարուց... ներսիսի Կլայեցւոյ» գործում, տպված Շնորհալու «Թուղթ ընդհանրականում», էջմիածին, 1865, էջ 461—497) և որ նարեկացու բառերի մեկնիչը բացատրում է «բան» (Տաղն՝ բան ասի)։

Առաջարկված ստուգաբանությունները մերժված են Հյուբշմանի և Աճառյանի կողմից։ Շեֆտելովիցը միացնում է պարսկերենից փոխառված տաղ «խարան» բառին և երկուսն էլ համարելով բնիկ՝ համեմատում լատիներեն *dolare* «շինել, կերտել», հունարեն *δοῦναι* «ճարտարությամբ շինել, *δοῦναι* «գրատախտակ» բառերին ու հանգեցնում հն/ս. **del-* «ճեղքել, կտրել, արվեստով շինել» արմատին. այս ստուգաբանությունն ընդունում է Պոկորնին (1, էջ 810), որ, սակայն, իրավացիորեն մերժում է Աճառյանը՝ իմաստի անհամապատասխանության պատճառով։ Թե՛ նախնական իմաստով («բան, խոսք»), և թե՛ նրա հետագա զարգացմամբ կապվում է հին հյուսիսային *tal* չ. «հաշվում, համբանք, խոսք», անգլոսաքսոներեն *tael* չ., «թվարկում, շարք», հին բարձր գերմաներեն *zala* «թիվ, թվարկում, լեզու», անգլոսաքսոներեն *tellan* (—անգլ. *tell*) «պատմել», հոլանդերեն *taai* «լեզու, խոսք», հունարեն *δόλος* «խորամանկություն», լատիներեն *dolus*, օսկերեն *dolom*, *dolud* (հյգ. և գործ. հոլոֆներ) «խորամանկություն, խաբերայություն», լատիներեն *dolosus* «խորամանկ», հունարեն *δόλος* «խորամանկել, խաբել» և այլ բառերի հետ և ծագում է հն/ս. **del* «նկատի ունենալ, նպատակ դնել, փնտսել, հաշվել, պատմել» (Pokorny, էջ 880) արմատից։ Որ հաշվել իմաստից կարող են ածանցվել խոսել, պատմել, երգել իմաստները, հաստատվում է բազմաթիվ տվյալներով, որոնցից կարելի է հիշել հունարեն *λέγω* «ասել, պատմել», բայց և՛ «թվել, համբել», լատիներեն *computare* «թվել, հաշվել» և «ծանր արտասանել», ֆրանսերեն *compter* «թվել, համբել» և *conter* «պատմել», *compte* «հաշիվ» և *conte* «վեպ» և, վերջապես, լավագույնը այս առիթով՝ նույն **del* արմատից՝ գերմաներեն *zahl* «թիվ» և *erzahlen* «պատմել», անգլերեն *to tell* «թվել, հաշվել, ասել, պատմել»։ Լստ այսմ՝ հայերենում տաղ նախապես նշանակել է «խոսք, պատմություն», հետո միայն՝ ստացել «երգ, ոտանավոր» իմաստը։

Նույն արմատի հետ է կապվում նաև հայերեն տոո բառը։ Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 6, էջ 941—942) համեմատելով վրացերեն Ծոլո *tolo* «հավասար. նման, հասակակից», Ծոլոծա *toloba* «հասակակցություն», Ծոլոծա *toleba* «բաղդատել», Ծոլոծա *tolaoba* «ձկների կամ օձերի զուգավորություն», Ծոլոծոլո *toltoli* «հավասար, հասակակից», Ծոլո *utolo* «անհավասար» բառերի հետ, գտնում է, որ «իմաստների աշխարհի երանգները թույլ չեն տալիս ընդունելու, թե մին մյուսից (հայերեն և վրացերեն — է. Ա.) փոխառյալ է, այլ երկուսն էլ փոխառյալ են միևնույն աղբյուրից» («Արմատական բառարան», հ. 6, էջ 942) և դրանից էլ ենթադրում է, որ տոո բառը «խալդյան շրջանի բառ է»։ Այդ ենթա-

դրութիւնը հերքւում է նախորդ՝ առաջին ստուգաբանութեամբ: Հիշենք, որ Շեֆտերիցը (A. Bezzenberger, Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen, h. h. 28, 29) և Պեդերսընը (Հայերենը և դրացի լեզուները, էջ 64) հայերեն տող համեմատում են անգլերեն tal, հին բարձր գերմաներեն zala, գերմաներեն zahl «թիւ», լիտվաներեն dalis, սանսկրիտ dala «մաս, կտոր, տերև», կիմերեն dalen, հին իսլանդերեն duillen «տերև», fodailim «բաժանում եմ», և այլ բառերի հետ և համարում հնդեվրոպական: Պոկորնին և, նրան հետևելով Աճառյանը մերժում են այդ ստուգաբանութիւնը, ելնելով այն բանից, որ հնդեվրոպական del արմատը, որից ծագում են հիշյալ բառերից մի քանիսը, չունի «տող» իմաստը. ժառանգներից էլ միայն անգլոսաքսոներեն toel, talu բառն է, որ ունի «շարք» նշանակութիւնը: Ըստ որում, Պոկորնին հայերեն տող բառի հիմնական իմաստն է համարում «գիծ, linie» (անգլ. էջ 809), որով և բողոքովին խզւում է համեմատվող բառերի իմաստային ընդհանրութիւնը: Կապելով հայերեն տող և տաղ բառերն իրար հետ՝ գտնում ենք, որ տող-ը պետք է կապել վերը տաղ բառի համար բերված բառերին, որոնցից մի քանիսը հիշում են Շեֆտերիցն ու Պեդերսընը, և որոնց հետ ոչ մի կապ չունեն վերջիններիս կողմից համեմատութեան դրված լիտվաներեն dolis, սանսկրիտ dala, կիմերեն dalen, հին իսլանդերեն duillen, fodailim բառերը: Պոկորնին էլ այս բառերն առանձնացնում է և դնում հնդեվրոպական *del «ճեղքել, կտրել, արվեստով շինել» արմատի տակ (անգլ. էջ 809—810): Տող բառի սկզբնական իմաստն է «ուղիղ շարք», որից ունենք՝ տողել «ուղիղ շարել, դասավորել», տողեալ «շարված», տողան շարք, դաս», տողաբան «շատախոս» և այլն: Հայկազյան բառարանը՝ տող բառը բացատրում է «ուղղագիծ դասավորութիւն, շարք և կարգ» իմաստներով, բայց հունարեն և լատիներեն բացատրութիւնների մեջ հիշում է նաև հունարեն στίλος և լատիներեն versus, որոնք երկուսն էլ նշանակում են «տառաւոր»։ ուրեմն Հայկազյան բառարանի հեղինակները, այնուամենայնիւ, ընդունում են այդ իմաստը: Այնուհետև՝ տողեմ բառը շատ դեպքերում գործածված է հայ հին մատենագրութեան մեջ, հատկապես մեսրոպյան շրջանի հեղինակների մոտ, Վրդեսել (գրան), պատմել, ասել» նշանակութեամբ: Ինչպես՝ բազում ինչ գառանցելոց առասպելս տողեմ: Առ որս ոչ են մեզ յերկարագոյնս տողել բանս... Ջի մի տողեալ երկայնեցից զպատմութիւնս» (Եւս. Քրոնիկոն, Սերբերիանոսի Եմեսացւոյ ճառք): Այս օրինակների մեջ տողել նշանակում է «պատմել, ասել», եթե ոչ ուղղակի, գոնե փոխաբերական իմաստով, ճիշտ ինչպես այժմ էլ գործածվում է խոսակցական լեզվում շարել բառը փոխաբերաբար (հմմտ. ընչ ես տակից-գլխից շարում=գուրս տալիս=խոսում):

Վերջապես՝ անգլոսաքսոնական toel, talu բառն էլ, որ ծագում է հնիս. *del արմատից, իմաստի նույն զգացումն է ունեցել, ինչ որ հայերեն տող-ը: Բայց եթե նույնիսկ տողեմ բառի վերահիշյալ գործածութիւնները և անգլոսաքսոններենի օրինակն էլ չլինեն, այնուամենայնիւ տող և տաղ բառերը կարելի էր անվերապահորեն կապել իրար հետ հենց հայերենի տվյալներով: Հայերեն շար(p) բառը, որ նույնպես նշանակել է «շարք, կարգ, դասավորութիւն», միջին դարերում արդեն գործածվում է տաղ իմաստով և այդ իմաստով են կազմված շարակնոց, շարակնոց բառերը, որոնք նշանակում են «երգ, երգարան», «եկեղեցական հիմքերի ժողովածու»:

Այսպիսով՝ հայերեն առդ և առո բառերը ծագում են հնիւ. *del- արմատից՝ վերը հիշված անդերեն, գերմաներեն, հոլանդերեն, լատիներեն, հունարեն բառերի հետ միասին: Տող ձևի ո-ն ստացվել է օ ձայնդարձից, որի համար կարելի է համեմատել հունարեն δόλος, լատիներեն dolus, անգլոսաքսոնական toel և այլ ձևերը: Ըստ այսմ՝ առո բառը հանվում է խաղաղական փոխառություններից և մտնում է հայերենի հնդեվրոպական՝ այսպես կոչված, բնիկ բառերի շարքը:

6. ՏԵՍԱՆԵԼ, ԳՎՌ. ՀԻՍՆԻԿ < ՀԵՄՆԵԼ «ՆԱՅԵԼ»

Մեզրու բարբառում նայել բայը չի պահպանվել. այդ իմաստով գործածվում է հիսնիլ բայը, որ այլուր չի գործածվում և որը մենք մեր «Մեզրու բարբառը» աշխատությունում մեջ (էջ 314) համարել ենք հնդեվրոպական spek¹-արմատից ծագած: Այդ աշխատությունը տպելու ժամանակ, սակայն, ինքներս էլ կասկածով ենք նայել այդ սառցարանությունը, նկատի ունենալով, որ հնչյունական օրենքները խախտված են: Այժմ, հենվելով տեսանել բառի մասին Մեյեի տված բացատրության վրա, հաստատում ենք այդ ստուգարանությունը: Բնչպես հայտնի է, տեսանել (արմատը՝ տես) բայը հանվում է հնիւ. *derk¹ -արմատից՝ համեմատվելով սանսկրիտ dr̥c-, dar̥c- «տեսնել», dadar̥ca «տեսա», dar̥cana- «աչք, երես», ղենդերեն dar̥sa «հայացք», dadar̥sa «նայել», հունարեն οὐρανός «ափսոսանք նայել», հին իսլանդերեն derc «աչք», ad-condarc «նայել, նկատել» և այլ համարմատ բառերի հետ: Հայերենը, սակայն, չի պահել ր հնչյունը, որ ըստ հնչյունական օրենքների պետք է մնար: Մեյեն՝ հիշելով այդ անհամապատասխանությունը՝ գտնում է, որ ր-ի կորուստը բացատրվում է *spek¹-և *derk¹ բառերի խաչավորմամբ². Թեև բացատրությունը տեսականորեն ճիշտ է, բայց նա մինչև այժմ մնում էր լոկ իրրև հավանական ենթադրություն և չէր հաստատվում փաստական որևէ տվյալով: Արդ, Մեզրու բարբառի հիսնիլ բառը դալիս է իրապես հաստատվելու այդ բացատրությունը: Նկատի ունենալով տեսանել և հիսնիլ < հեսնել բառերը, կարող ենք հանգել հետևյալին. առաջինը ծագել է հնիւ. *derk¹ արմատից, որի օրինական ձևը պետք է լիներ տերս, իսկ երկրորդը ծագում է *spek¹-, արմատից, որ հայերենում պետք է տար սպես (հմտ. spr̥ > սպսոնալ) կամ s-ի անկումով՝ հես: Այս արմատի ցեղակից ձևերն են. սանսկրիտ spaçati, paçyati «նայում է», հունարեն σκέπτομαι «նայել», σκοπός «գիտող, զննող», ալբաներեն paşr «տեսա», լատիներեն specio «տեսնել, նայել», species «տեսք, երես, երևույթ», հին բարձր գերմաներեն spehon «նայել», հին իսլանդերեն spā «նախագուշակություն» և այլն: Սրանցից հայերենի համար առանձնապես կարևոր են սանսկրիտ paçyati և ալբաներեն paşr, որոնք նույնպես դուրկ են սկզբի s-ից, մանավանդ վերջինը, որի համար Պոկորնին (հ. 2, էջ 660) ենթադրում է (s)pok-s ձևը, այսինքն՝ առանց սկզբի s-ի: Հայերենն էլ, ուրեմն, ստացվել

¹ Ինչպես տող և տող բառերի կապակցությունը, այնպես էլ նրանց ստուգարանությունը հայտնել էինք պրոֆ. Յ. Աճառյանին, որ հավանություն էր տվել և խոստացել մոցնել «Հայկական» հոդվածաշարի շարունակության մեջ, բայց վերահաս մահը խափանեց այդ մտադրությունը:

² Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, էջ 135, 144:

է այդ ձևից՝ *s*-ի անկումով և *p* > *h* օրինական հնչյունափոխությամբ. *S*-ի անկմանը հալմանարար նպաստել է աեւ.սնել բառը, ինչպէս որ վերջինիս *p*-ի անկումը կապովում է հեւսնել բառի հետ: Այսպիսով՝ նախ հաստատովում է Մեյի բացատրությունը աեւ-արմատի մասին, երկրորդ՝ հաստատովում է Մեյրու բարբառի հիսնել < հեսնել < *հեսանել բառի ծագումը հն/ս. *spek*¹-արմատից. երկու արմատների խաչավորումը և նրանց փոխադարձ ձևափոխությունը, որ Մեյեն միայն կոտանել էր, այժմ հաստատովում է փաստացի կերպով:

7. ՆԿՈՒՂ

Նկուղ բառը, որ ավանդված է հին մատենագրությամբ՝ մեսրոպյան շրջանից, նշանակել է Վսորք, գետնափոր վայր, այլև՝ Քարաւանի իջևան. հնագույն գործածությունն ունենք Աստվածաշնչում, հետեյալ նախադասության մեջ. «Եգից զնինուէ յապականութիւն, ոգնիք ի յարկս նորա բնակեսցեն. և գաղանք գոչեսցեն ի նկուղս նորա» (Սոփոն., Բ., 14):

Նոր Հայկազյան բառարանը, նրան հետեւելով նաև Հ. Աճառյանը (Վերմատական բառարան, հ. Ե. էջ 139) տալիս են Վաճառանոց, մթերանոց, գանձատուն ևս, որ քաղւած են Վին բառարանից, բայց որի համար մատենագրությունից վկայություն չեն բերում: Ժամանակակից լեզվում նշանակում է գետնափոր տուն, տան գետնահարկ:

Հին իմաստով հոմանիշ է գրարարյան կաղաղ բառին, որ նշանակում է սորջ, թաքստոց, գաղանների գաղարի վայր, ծակ, բուն. երկու բառերի իմաստային տարբերությունն այն է, որ մինչդեռ երկրորդը չի նշում որջի կամ գաղարման վայրի ցածր լինելը, առաջինն ուղղակի ցույց է տալիս ցածր տեղ, գետնափոր տեղ: Կաղաղ բառը կրկնափոր է և ծագում է հն/ս.* *gol* Վկացարան, որջ, բուն բառի ստորին ձայնդարձով ձևից, այն է **gl*: Նկուղ բառը ներկայացնում է պարզական արմատը՝ նխ-նախամասնիկով, որ նշանակում է ցած, ներքե (հմմտ. նզով, նայել > **n*խ.այել և այլն): Հետևաբար՝ նախնական կուղ արմատը, որ առանձին չի պահպանվել, ծագում է հն/ս. **gol* արմատից, օրինական հնչյունական փոփոխություններով: Յեղակից լեզուներում ավանդված ձևերից կարելի է համեմատել լիտվաներեն *guolis* ժամրգիկանց և գաղանների կացարան, դադարի վայր, որջ, լեթթերեն *guol'a* Վկացարան, բուն, լիտվաներեն *guliū*, *gulti* Քաղաղից, լեթթերեն *gult* Քաղաղիկ քնելում, *gul'a* Քնարան, կացարան և այլն: Հայերեն երկու բառերը՝ նկուղ և կաղաղ ժամանակի ընթացքում, բացի նր-մասնիկով ստեղծված տարբերությունից, ստացել են նաև իմաստի այլ տարբերակում. նկուղ նշանակել է ընդհանրապես ցածր գտնվող վայր, գետնափոր տեղ և թե մարդկանց, և թե կենդանիների համար, իսկ երկրորդը՝ տեղ, որջ և կենդանիների, այն էլ մեծ մասամբ սողունների համար: Այդ տարբերակումով է, որ նկուղ վերջապես ստացել է այժմյան իմաստը, որ արտահայտում է տեղի ցածր, գետնափոր լինելը և վերաբերում է մարդկանց կացարաններին, բայց մյուս կողմից էլ՝ հենց գետնահարկ իմաստի պարզացմամբ ստացել է նաև ժաման, մթերանոց իմաստը:

8. ՇԵՐՏ

Այս բառի բաղմաթիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուրըմասնի և Աճառյանի կողմից: Հյուրըմասնը (Arm. Grammatik) հիշելով շերտ

բառի համեմատությունները ցեղակից լեզուների ձևով և իմաստով նման բառերի հետ, գտնում է, որ դրանցից ոչ մեկն էլ ընդունելի չէ, թեև նշանակության տեսակետից հարմար է համարում հունարեն σείτω «ճեղքել», σείτω «փայտի կտոր», σχίζω «ճեղքված փայտ», գերմաներեն scheit «փայտի մեծ կտոր» և այլն բառերը, որոնք, սակայն, ծագում են հնիս. *sk^hhid- արմատից, որ տվել է հայերեն ցտել:

Աճառյանը (Արմ. բառարան, հ. 5, էջ 332) հիշելով Հյուբշմանի մատնանշած լիտվաներեն skedra՝ բառը, որ Հյուբշմանն իսկ մերժել է հնչյունական օրենքների խախտում նկատելով, գրում է. «Այս բոլոր ձևերից ամենահարմարն է Հյուբշմանի մատնանշած լիթ. skedra «տաշեղ», որ թեև պիտի տար հյ. շերտ, բայց այս էլ համաձայն հայերենի ներքին ձայնական օրենքների՝ իսկույն պիտի դառնար շերտ: Անպատեհ է միայն այն հանգամանքը, որ լիթ. skedra գրվում է հնիս. *sqeid արմատի տակ, որ տալիս է հայերեն ցտել: Ներկա ենք թերևս ձայնարանական մի առանձին օրենքի, որի պայմանները անծանոթ են մեզ: Պատրուրանին (Sprachwissenschaftliche Abhandlungen, հ. I, էջ 195) կցում է լիտվաներեն kerfu «կտրել», հունարեն κέρτος, լատիններեն curtus և այլ բառերի, որոնք, սակայն, մերժում է Աճառյանը (անդ, էջ 331), որովհետև դրանց հետ կցվում է հայերեն քերել բառը:

Պատրուրանին ճիշտ է կոհում համեմատվող բառերի ընդհանրությունը, բայց չի կարողանում գտնել հայերենի հիմքում ընկած նախաձևը և ցեղակից ձևերը: Հնդեվրոպական այն արմատը, որից ստացվել են հիշյալ լատիններեն, հունարեն և այլ բառերը, ունի s-ով և առանց s-ի ձևեր. առանց s-ի ձևերից ստացվել են հայերեն քերել, քորել < *qer (հմտ. սանսկրիտ kṛnati «սպանել, վիրավորել, ոչնչացնել», հունարեն κείρω «կտրել, ձևել, մկրատել, խուզել», հին բարձր գերմաներեն sceran «կտրել» և այլն), քերթել, քերծել < *qeret (հմտ. լիտվաներեն kertu «կտրատել», սանսկրիտ kṛntati «կտրել», ալբաներեն këth «ածիլել» և այլն), քարքայիկ օձ < *qerep (հմտ. հունարեն σκαρπίος «կարիճ») բառերը: S-ով արմատից է ստացվել հայերեն շերտ բառը, որի նախաձևն է *særd. ցեղակից լեզուներում այս ձևից ունենք միջին բարձր գերմաներեն scherze, scherzel «կտոր», հին սաքսոներեն kurt, հին բարձր գերմաներեն kurz, իսլանդերեն kortr «կարճ» (վերջին երեքը առանց s-ի ձևից), միջին բարձր գերմաներեն schranz «պատառ, շերտ, կտոր» և այլն: Այսպիսով՝ շերտ բառը կապվում է քերել, քերթել, քերծել, քարք բառերի հետ և ծագում հնդեվրոպական *sqer, qer արմատի s-ով ձևից, մինչդեռ մյուսները առաջանում են առանց s-ի ձևից՝ տարբեր ածականներով:

* * *

Այս ստուգարանություններից հինգը (հայել, նայել, արտորալ, բայ-ոց, հիանալ) ընդունել է Հ. Աճառյանը և մտցրել իր Վճարոց լեզվի պատմություն» երկրորդ մասի մեջ (էջ 601). դրանց հետ միասին հնդեվրոպական արմատների թիվը կազմում էր 927. այժմ ավելանում է ևս հինգ արմատ (տաղ, տող, գլո. հիսնիլ < հեսնել, նկուղ, շերտ), որով և գումարը լինում է 932, իսկ խալդական փոխառություններից պակասում է մեկը: